

Գրենիկոս և Էսպոս և Սկամանդրոս աստուածային,
Եւ Սիմյէն, ուր խուռն ասպարք արջառա-
մորթք՝ և սաղաւարոք
Անկան տըղմթաւալ, և ազգ արանցըն կիսա-
դից »,...

Ահա Վիրգիլիոսի բովանդակ տողերն ,
որ իր մտքին մէջ պատրաստ կեցեր
էին մինչև որ ճարտարութեամբ ազոյց
ենէասայ հառաչանքին վերջը , զոր կը
նկարագրէ : Կը հասկընանք , տեսնե-
լով այս հնարագիւտ յաջողակութիւ-
նը , Վիրգիլիոսի պատասխանն առ զին .

Քը մեղադրողներն , թէ Հոմերոսէն կը
գողնայ . ահա այսպէս կ'ըսէ . « Ինչու
իրենք ալ չեն ջանար զնոյնն ընել . որ-
պէս զի տեսնեն թէ աւելի դիւրին է
Հերակլեսէն իր լախտը գողնալն , քան
թէ Հոմերոսի մէկ տողն » : — Եւ յերա-
ւի այս կերպ գողնալն , ուրիշ տեղոյ
տողերն առնուլ , յարմարցընել և դնել
պահանջուած տեղն , իր գեղեցկու-
թիւնն յայտնի ընող տեղն , կ'իմացը-
նէ թէ գրողն գեղեցիկ նախագիծ օրի-
նակն և պատկերին գաղափարը պայ-
ծառապէս մտքին մէջն ունի :

Կը շարունակուի :

Տ Ր Դ Ա Տ Ք Ե Ր Թ Ո Ւ Ա Ծ Թ Ա Տ Ր Ե Ր Գ Ա Կ Ա Ն

Տ Ե Ր Ի Ս Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ս Ս ' ,

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ծ Բ .

Տեսարանն է յԱմարաստանն առ Մայրաքաղաքս Վաղարշապատս . ի սրահին Արքունի
(Նկարք դիպագանց յորմանս , և կամարք յաղբանակաց) :

Տ Ե Ս Ս Ր Ա Ն Ա .

Ս մթառ

Ոչ բարձր ի գլուխ պարծին յերկրի աւագք և տեարը ընդերկայն
Եւ ոչ զլւարթ գիպին աւուրք տալ ըզհանգիստ յամառան ,
Թէ ոչ պարք դից խընամ ածեալ անդարձ տացեն պատուիրան
Մի այլ տեղալ ջուրց կոհակաց՝ ըզլանթ կալեալ որոտման :
Լոյսն արեգի ոչ փոյթ զեղու զաւետիս իւր բերկրանաց
Թէ ոչ անհետ փարատիցի սեաւ մըթուլծին գիշերաց .
Կարգք են սոքա ուղղեալք բազկաւ անմահ վեհից մըշտակաց
Որովք երկինք , հաստատութիւնք , և հոյլք լուսոյ են քանդուած .
Այժ , վրտանգք և արհաւիրք ընթացան մեր առաջի
Եւ երկուստեք՝ արեան հեղան գետք յորդահոս ի դաշտի .
Յաղթեաց բազուկ քաջ կորովոյս մաշեալ ի սուր սուսերի ,
Անկանգնելի անկաւ վիրազն Հիւսիսայնոյ վատորդի :
Պանծայ զարդիս տուն Հայկազնեան ընդ յաղթութիւնն ներկայ ,
Ջերկիւղ մերժեալ և ըզկորուստ՝ զի հէզք անկան անխընայ :
Օր է փառաց , օր ցընծութեան , նոխազ զենցի Անահտայ ,

Ձի մըրցութեանց և արմըտեաց նա հաւասար պաշտպան կայ :
Բարէ , զի են երջանիկք ողբ ի սիրոյն կապ վայելեն ,
Արդարամէտ խաղաղութեան նոցին յաւէտ օրէնք են .
Ետեն արդեօք անդորրութիւն մեծ քան զայս այր հողեղէն .
Զայդ կապ սիրոյ պինդ յետ մարտիս կալցի աշխարհ համօրէն :

Տ Ե Ս Ս Բ Ա Ն Բ .

ՍՄԲՈՍ, ՏԱՃՈՍ

Սմբատ

(Գայ Տաճատ աշխարհայ) : Արագ այդ քո գալուստ վասն իրիք է նըշան .
Ո՛հ տագնապ մեծ , հիմ այդ այլափոխ կերպարան :

Տաճատ

Ինձ հաւաստեալ թըւէր անմարթ , ի պետ քաջաց ,
Թէ յարատե չէ երբեք բազդ թագաւորաց .
Ձի սարսափ է , այլ և վարանք մըտաց անեղ ,
Աչք մըթագնեալ պատէ զինն ալեաց հեղեղ :
Քան ըզծով անդր ի տար աշխարհ փախեայց փութով ,
Մի տեսից ես ի դահ զԱրքայ յուզեալ ի խռով .
Վարկպարագի է և ունայն փառաց պըսակ .
Մինչ յուշ ածցի դիպուածս , արեան պաղին երակք :

Սմբատ

Անկար եմ ես խորհըրդոյ քոյ լինել տեղեակ
Միթէ իցեն հետք վըրդովման երկպառակ :

Տաճատ

Ձինչ յուզումն անպայման և զինչ ցաւ .
Ողբամք՝ զի արքունի թագ կորեալ :

Սմբատ

Ո՛ր ձեռն ապաշնորհ յառնէ հակառակ՝
Զայն ի միջոյ շանթ բարձցէ երկնառաք ,
Վաղ դու ինձ յայտնեալ զայն վէս վըրդովիչ ,
Տուն լիցի նորին յաւեր և բնաջինջ :
Արշակունւոյն հուր՝ կիզու ըզմատնիչ ,
Պողովատիկ սուրն իմ կացցէ զահիւճ :

Տաճատ

Յարեան Ամազունք ի ճակատամարտ .

Չեն նոցա սուսեր , ոչ տէգ , ոչ ասպար .
Բանք նոցա անդարձ , և սիրտ երկաթի ,
Բարուքն ապրտամբ չեղեն նազելի :
Կուսանք են սոքա եկեալք ի Հռովմայ ,
Առադաստ երկրի յայնց էր ի բացեայ ,
Անկան փախըստեայ յաշխարհ Հայաստան ,
Խաչեալ Աստուծոյ կան ի պաշտաման :
Էր ոմն ի նոսա անձնեայ և ծաւի ,
Տեսիլ էր նորա՝ տեսիլ հրեշտակի .
Ինքնակալն Հռովմայ եթող գըլխովին
Ի կամա արքայիս առնուլ զայն ի կին :
Վեհին Տըրդատայ այդրմ լեալ գիտակ ,
Ընդ աշխարհ սրփռեաց բազմաթիւ խընդրակ .
Յորոց իրազեկ տեղւոյն փախըստեան ,
Փակեաց զանձնագեղն յիւրն սըրսկապան :
Աղմուկք և տաղնապք եղեն յարքունիս ,
Ընդդէմ նա դարձաւ կամաց արքայիս .
Նըման աստուածոց ըզգեցաւ կորով ,
Ոգորէր հանդէպ քաջալանջ թափով :
Արքայն հըզօրեղ դեդեէր յուժի ,
Պարտեալ ի կուսէն հարաւ ըզգետնի .
Ի փորձըս կըրկին կացեալ արհամարհ ,
Կիրք իւր յուզէին տըխրեալ ոգեսպառ :
Յատելութեան անդ , զի կաց խաղալիկ ,
Փոխանակ սիրոյ կարդայր դատակնիք .
Չրաւել ի կենաց զըմբոստն ընդ ընկերս
Չարաչար տանջեալ յօշել դէզադէզ :

Սմբատ

Դէպք անակընկալ , իրք զարհուրելի ,
Ընդ որ սարսուռ արդ յոսկերս հարկանի .
Այլ դու , պատմեա՛ , զի՞նչ ըզհետ եկն անտի ,
Չըբաւեմ ժուժալ ցաւոց իմ սըրտի :

Տաճատ

Լաւ ինձ լրուել աստ մի խաղալ յառաջ ,
Չի մի յաւելից զարտասուաց թառաչ ,

Այլ զինչ չա՛հ, գործն է մերկապարանոց ,
Կայ այժմո՛ գատարկ արքունի բազմոց :
Յորմէ լինէին ազինք ահաբեկ ,
Կըրից Տըրդատայ լիցին իրազեկ .
Խեղք անսանձ ըզհարկ կալցեն ի պահեստ ,
Յորդեպցեն վայրագք և գոռոզք ի հետտ :
Տըրդատ մըրըրկեալ ալեզքըն վըշտաց ,
Խոստանայ անձին նիւթել ըզհարուած .
Աչք նորա հրացայտ և դէմքըն խոժոռ
Առ վըշտին՝ զինու ջախջախէ զաթոռ :
Այս նորին վիճակ ըզտիւ ըզգիշեր ,
Դիք չարահաղորդք մատնեն զնա յերեր :

Սմբատ

Եղո՛ւկ ուրեմն արչակունեան գահին փառաց .
Չարեաց մերոց այդ յիշատակ և անմուաց :
Ո՛ր արեգակն՝ նորին լոյս ճառագայթից .
Բաբէ թաքեան , ըստուերք մահու լինին մեզ կից :
Մի արտասուք , մի ձայն ողբոց առցեն դադար ,
Ընդ մեր կորուստ կոծեսցուք մեք անմխիթար .
Անհետացաւ հանգոյն հողմոյ շուք ազգութեան
'Դ որ հիապքանչ զարմանային ազինք համայն :
Եւ զինչ , ապա տեսցուք արդեօք օրհաս խաղաղ ,
Թէ ընդ առաջ դիպեսցի մեզ արեան ճապաղ .
Յանժոյթ տեղւոյ՝ որոշեսցի մեր հանգըրուան
Մինչև լըցցի մեր թըշնամեաց չափ ցընծութեան :
Այլ դու , փութա՛ , ո՛վ քուն հեղիկ , տար զիմ հոգի
Ձի մի՛ զազգին աչք իմ տեսցեն վիճակ յոռի :

Տաճատ

Ճըմեխ զիմ սիրտ աղիողորմ արտասուօք քով՝
Մինչ զի հեծեն համատարած աշխարհ և ծով : (Աղմուշկը շսիմ) ,
Ձինչ այս գոչումն որոտնաձայն , զինչ աղաղակ .
Օ՛ն , ել արտաքս հասու լինել այդմ համարձակ :

Սմբատ

(Գիտելով) : Չայն է այդ Տըրդատայ որ գոռայ յոստանին ,
Նորին միտք ալէտանջք խայթոցօք տագնապին :
Ընդ առաջ եկ ելցուք խոնարհիլ երկիւղած ,
Ըզդարման աղետից գըտցուք մեք անկասկած :

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԱՐՏԱԻԱԶԴ, ՏԱՃԱՏ, ՍՄԲԱՏ

Արտաշատ (գալով) :

Ո՛ւմ դուք , ո՛ւմ կայք հանդէպ ի զընին ,
Նետին թէ սլաքին որ ի ձեռին .
Ահաւոր են նորին կերպարանք ,
Ի բերան նորա չեն սիրոյ բանք :

Տաճատ

Ի տագնապ դառնաղէտ մատնեցաք ,
Լերուք , զիք բարերար , օժանդակք ,
Զի եթէ յամիցէք ժամանել
Խըզենցի արքային կենաց թել :

Արտաշատ

Ժամ է յորդ արտասուաց , մըշտակոծ .
Զայդ տեսիլ ոչ ետես ազգ Հայոց .
Աստ ահա՛ Տըրդատ գայ հասանէ ,
Փախերուք ի նորին ցասմանէ : (Փախիլն) :

Սմբատ (արգելեալ զնոսա) :

Առ ինչ ձեր փախուստ , հիմ երկընչիք .
Զիցէ մեր թագաւոր այս բընիկ ,
Կեծարեմք մեք ըզնա ողջունիւ .
Օ՛ն , հապա , ընդ առաջ : . . . (Ընդ առաջ նորա երթան) :

ՏԵՍԱՐԱՆ Գ. .

ՏՐԴԱՏ, ՍՄԲԱՏ, ՕՏԱՅ

Տրդատ (գալով ընդ Օտայի) :

Ո՛ւր դու , անըզգամ ծընունդ դիւամուլ ,
Հիմ դու ընդ ոտիւք զիմ արկեր սէր խօլ .
Իցեմ ես գըծուծ կամ զուրկ յարժանեաց
Զի յորջորջիմ ես ի քէն վատազգեաց :

Ո՛վ կամք ապիրատ , չեղեր դու գիտակ
Թէ պատրաստեալ կայ քեզ զըլխոյս իմ թագ .
Ընկալ ի քո սիրտ զիմ նետ վրիժառու (նետէ) .
Որով հնազանդ ինձ լիցիս և հըլու :
Ո՛վ տապ տոչորիչ , գեղ նորա չըքնաղ ,
Ո՛վ բաղդ տարադէպ , կորեաւ այդքան վաղ ,
Մինչև ցերեզ զողիս թափեա վայրապար .
Անձն իմ չէ տոկուն չիք յիս այդչափ կար :
Ըզշունչ կուսին մահ բարձ անագորոյն
Եւ իմ հիւժեցաւ մարմին բարեմոյն .
Ո՛վ դիք , ինձ ընդէր ետուք ի պարզե
Կեանք յուսակըտուր զօրաց ակներե :

Ոմբաստ

Ընդ տեսիլ անձկութեան սըրտաբեկ անկանիմ ,
Մատնեցաւ ի կորուստ իրաւամբ ռեսերիմն ,
Զիարդ է զըժպըհի չըլինել ունկընդիր
Բարեգործ հրամանաց արքայի ժիրաժիր :

Օտայ (մեկուսի) :

Ի նանիր վաստակի վարակեալ յուսահատ .
Որ բարւոյ ընկերին համայն չէ ի խընդիր ,
Զոն նըմա ի հանգիստ ոչ աթու ոչ պալատ ,
Այնպիսին ի պատուոյն վարեսցի տարադիր :
Մարդոյ է իմաստնոյ ըստ չափու գոլ զըթած ,
Ընդ թագին լի բարիք ի յերկնից պարգետին .
Զիցէ չար թողեալ զիւրըն ցանկալ օտարաց
Եւ զըրկիլ յակամայս . . .

Տրդատ

Լէ՛ր տակաւին ունիս ի բռին դիմ հողի ,
Ո՛վ գե դըժխեմ , անձին իմոյ թըշնամի ,
Ուսալի այդ կապ , ո՛ր դիմ կալաւ ոյժ բաղկի ,
Ո՛ւր նիզակն իմ , զոր հարի ընդ լանջ կուսի .
Ո՛ն , ի սիրտ իմ մըսցէ ի կուշտ թափանցանց
Զի նըմին տաց զիմոց վերջին շունչ կենաց .
Կամ դովեսցի Տըրդատ ընդ դունդ անմահից
Կամ ի դըժոխս իջցէ արագ յուսալից ,
Հապա , նիզսկ արեանարբու , մուտ ի կուրծս : (Արգիլեմ զնա) :

Սմբատ

Խնայեա՛ , արքայ , ի ճապաղիս քո մաղապուրծ :

Տրդատ

Կարկեանց ե լեր ափ ի բերան .

Մխեցից ի սիրտ քո՝ իմ փոխան՝

Ջարեան նիզակըս դաւաճան ,

Հէք դու ծընունդ ամբարտաւան :

Արին եռայ յիմ գագաթան

Բառնալ յերկրէ մահուս դարան .

Ի՞բր համարձակ իմ յանդիման

Գործոցըս դու լինիս խափան :

Սմբատ

Զեմ՝ ես արքայ խէթ ե արգել որպէս կարծես ,

Առաջի վեհ արշակունւոյդ զինչ խօսիմ ես .

Իմ պաղատանք անկեալ յողոք ի քէն խընդրել

Ջայրոյթ սըրտիդ ըզտըրտմութիւնդ յանձնէ արգել :

Տրդատ

Ի քէն խընդրեցից զանձկութեանս վըրէժ ,

Մահուամբ իսկ քով շանց մարմինդ անկցի գէշ .

Ջայս արինաբաղձ ընկալ նետ ի լանջ ,

Ընդ այն հանգիցէ միտք իմ ալէտանջ : (Փախլի Սմբատ) :

Ոչ այսու գեղոյն բարձցի յիշատակ ,

Աղէտք մեծ , ձայնիս գիք են հակառակ :

ՏԵՍԱՐԱՆ Ը .

ԱՐՏԱԽԱԶԴ . ՏՐԻԱՏ . ՕՏԱՅ , ԶՕՐԱԿԱՆՔ

Արտաւազդ

Ջորպիսեանց՝ դ արքայի ինձ խօսել իցէ հնար ,

Զինչ ի մէջ բերիցեմ տազնապ է հաւասար .

Կիրք անձին մեծայոյզ սչ թողու զինքն յապաղ

Փութասցուք յըղբօսանս գեղարդեամբ յորսոց խաղ :

Ելցուք կազմ, արքայդ մեծ , ելցուք մեծ յառապարհ ,
Գեղարդունք ի ձեռին իբր ի մարտ բերկրարար .
Ընդ խաղաղ ասպարէզ յարշաւանս կենդանեաց
Զըքնաղ է դաւարեաց և տընկոյց յօրինուած :
Արձակ ընդ զաշտավայր խաղան քաջք գունդ ի գունդ
Շըկահինն ասպարաց և զինուց տան ըզթունդ .
Երգողաց երամ յօդս թե ի թե սաւառնին
Ընդ լերինս և ընդ կիրճս են գազանք խըմբովին :
Ո՛ր հովտաց գեղեցիկ են ծաղկունք երփնազարդ ,
Փունջ ի փունջ գետեղեալ հոտաւէտ շուշան վարդ ,
Ոռոգեն զարտ պարարտ աղբիւրք ջուրց յորդառան ,
Պըտղովք է ճոխացեալ և յուռթի Այրարատ :

Տրդատ

Եւ կարի իսկ քաջ , բանք քո ճըյմարիտ ,
Զի երբեմն ընդ մէջ ծառոց խիտ առ խիտ
Ըզհետ պընդէի կընճաց վայրենեաց .
Ե՛րբ միւսանգամ յորս ելցուք մարտընթաց :

Օտայ

Կազմ են և պատրաստ հանդերձանք ուղւոյ . (գան զօրք) :
Երէք և վարադք խայտան ընդ Մասիս .
Շըւարին անբանք ի հընչել փողոյ
Եւ յարձակել նետս յերամս անարիս :

Տրդատ

Էր անվրիպակ յորսորդութեան աջ իմ նետիւ
Եւ բոլորէր բազդ իմ զինն իբրն զանիւ .
Այժմիկ ընդէ՛ր արեգ յարքայս հայի խեթիւ ,
Զայն տուք , մանկունք , յորս ընթացուք որպէս ի կռիւ :

Զօրականք (ի քայլ) :

Երգ

Ի հուր մըշտավառ
Շամբն այրի յանտառ ,
Խումբ գելու կընճաց
Արութեամբ բազկաց ,
Ոստչի ի նետից
Շըկահինն հրալից :

Արշաւնն արձակ ընդ դաշտ
Զիմամարտիկ զօրաց վաշտ :
Ի մօրին երէք թաքչին ,
Այեր և հող տրուիէ ուժգին ,
Հարուստ աւար ըզվարձ քըրտանց
Մատչիմք ունել մեք քաջապանծ .
Հուր բորբոքի ի ճակատու
Ի բոց անշէջ զանտառ կիզու .
Արշաւնն արձակ ընդ դաշտ
Զիմամարտիկ զօրաց վաշտ : (Զտեղի առնուն) :

Տրդաստ

Մատն ի բերան Արիք հիստցին ընդ փառս արւոյս ,
Ճեւտ խոսրովեան անվրկանդ է կորովաբոյս ,
Զօն յարգանաց ինձ մատուցեն դարք ապագայ ,
Զազդ հողածին ի սուր մատնեմ սուր յանխընայ :
Ո՛չ զօրութեանս են իմ պարծանք փորձառութեան
Պողոպատիկս այս , և սըլաք դիւցազնական .
Ելցեն Արիք վեհիս հանդէպ մատամբ ճարտար ,
Փոյթ խոնարհեալ ողջունեսցեն զիմ դարչապար :
Ահա վարազք խուճապ ետուն վըտանգապուրծ ,
Ըզլեառն , ըզդաշտ ոսկեզօծեն նըլոյլ զինուցս :
Օ՛ն , միւսանգամ երգ հընչեսցի քաղցրանըւազ ,
Կըրկին յիմ գլուխ փառս յաւելու արքունի թագ :

Զօրականք

Ի հուր մըշտավառ . (մինչև ցկէս) :

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՏՐԴԱՏ, ՏԱՃԱՏ, ԱՐՏԱԻԱԶԴ, ՕՏԱՅ

Տրդաստ (ընդհատելով) :

Զիցեմ ես արքայ Հայոց վեհազուն .
Այլ զմէ ոտք և ձեռք իմ են դողդոջուն ,
Երկիւղ և սարսափ պատէ զոսկերս հոժ ,
Զեն ինձ հեշտալի այդ հընչմունք երգոց :
Զեռն աներեւոյթ կապէ բըռնահար .

Նախարարք, դուք ինձ լերուք մըխիթար .
Վարանեալ ծըփի սիրտ իմ տազնապաւ ,
Ոյժ բազկիս վատնի տակաւ առ տակաւ :

Տաճարտ

Մերժեսլիր ի բաց զայդ վըհատութիւն .
Քան ըզքեզ ուժեղ չիք ուրեք համբուն .
Ի մարդ գորգապատ նըստեալ զովացիր
Ուտեւ ի շամիուր ըզխորտիկ ընտիր :

Արտաշազդ

Թանաքարիզի տարակուսին վաշտքըն գոռ
Հըզօրք գեւուն ի թագըստեան ակընկոր ,
Գամիւռունք ի հեզ դառնան դառն քո յանդիման ,
Ազդեցութիւնդ մինչև երկնից ի խորան :

Օտայ

Երբ թագաւոր խոհեմազարդ ի գահ կայ
Խաղաղութեամբ դոյ ամբոխմանց հակակայ :

Տաճարտ

Ի մեծն աստի Հայաստանէ համասփիւռ
Մէն մի ազգաց յառնեն պատգամք հաստամուր .
Բընադաւառ և մարդկութեան խանձարուր
Շուրջանակի ժողովըրդոց արկ զանուր :

Օտայ

Օրինապահ եղեալ բարոքը ընթացիւք
Յաւերժանայ յիշխանութեան գեղաշուք :

Արտաշազդ

Առ վաղարշակաւ արքայիւ Արեաց
Բարիք զեղուին յերկիր գերազանց .
Աւուրք Տըրդատայ մըթերեն ըզնոյն
Այգիք և պարտէգք են բազմաբեղուն :

Տրդատ

Կրթանք և խընջոյք սրտոց հանդիսի ,
Իբր հետամուտ յայլ նուազ պարապէաք ,

Այսօր արքայիս չեղին նազելի ,
Աղէտք յիմ վերայ տիրէ խոչընդակ :
Տըխուր դէմք ամպոց ըսպառնան ինձ մահ ,
Նետ է ի ձեռաց ձրգեալ Արարչին .
Վիշտ ներքին յուզէ , զոգիս լընու ահ
Ի՛ արհաւիրք ահեղք աչացս երևին :
Յայտնի նըշմարին ի լոյս արևու
Զոր ինչ ազդեցին տեսիլք անըրջոյ ,
Ոչ բերան իշխէ պատմել ոչ լեզու
Զաւուրս ութ փախեալ քուն յաչաց իմոց :
Զայն սըրտմըտութեան յունկն իմ բարբառի .
Երկիր դողալով , արարած ըմբոստ ,
Դու անօրինել իշխեցեր յերկրի ,
Աւուրք քո անցցեն յերերանս ընդոստ :

Արտաւազդ

Զայն է այդ , արքայ , հողմոյ հընչելոյ ,
Վանեացի անհետ հանգոյն ջուրց հետոյ .
Ի զուր ճըգնեացին ցընորք անմարմին
Յանձըն քո կուտել աղէտ վըշտագին :

Օտայ (մեկուսի) :

Այր ամբարիշտ մի՛ յուսասցի յիւր բազուկ ,
Աւուրք մեր են իբրեւ զըստուեր վաղանցուկ ,
Խախուտ են կեանք ունայն պատիւ հողմավար ,
Իբր ընդ նոսա թեօք մածնումք գըրկախառն :

Տաճատ

Ընդունայն խընդրէ կալ ի յանդորրու :

Օտայ

Քանդի չիք փախուստ ի ժանեաց մահու :

Արտաւազդ

Ոչ ի կայծականց՝ յաղթանակ քաջին
Կորզել բաւեացէ ըզդից ատելին : (Գոռայ երկին) :

Տրդատ

Է՛ր այդքան բարկացայտ դըղորդես ըզբնութիւն .
Մեղուցեալ թէ իցեմ մի՛ դռար ի նանիր ,

Ընդ ոտիւքս ընկճեսցի քաջութիւն թըշնամոյն ,
Քամահեմ ըզքո ձայն , չըլինիմ ունկընդիր :
Շունչ է յիս արութեան , յազգէ եմ դիւցազանց ,
Արհաւրաց չիք տեղի , չիք բախմունք ի սրտի .
Ո՛հ , բարբառ մեծաղբո խօսի զիմ յանցանաց ,
Ո՛վ դու , զինչ գործեալ եմ յայտնեալ ինձ մի առ մի :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՍՄԲԱՏ. ՕՏԱՅ. ՏՐԴԱՏ. ՏԱՃԱՏ. ԱՐՏԱՒԱԶԴ.

Սմբատ (կալով մեկոռսի) :

Յարդար վըճռոց օրէնքսդրին են՝այդ վարանք
Որոյ քաղցր են օրէնք անխախտք և պատուիրանք .
Ընդդէմ եկաց նորին կամաց՝ մատնեալ ի մահ
Զանմեղ կուսանս , որք պաշտէին զէն յերկնագահ :
Զինչ Գրիգորի չար արարեալ ընդդէմ կարգաց
Զի ի տանջանս անագորունս ըզնա մատնեաց .
Արինք նոցա բողբեցին յԱստուած ազդու
Եւ նա եհատ ըստ յանցանաց վըճիռ վրիժու :

Օտայ (մեկոռսի) :

Ես իմովսանն ո՛րչափ նըմա ետու խրատ
Մի ի տանջանս մատնել զԳրիգոր տարապարտ ,
Անդուծ ի նա զեղան հարուածք դըժընդակ
Մինչև ըզկիրս յազեցուցեալ բովանդակ :

Տրդատ

Հեռի յինէն ամենեքին վատ և չար ,
Ըզպաք չեչտեալ խոյանամ արդ բոցավառ ,
Հուր ի ներքուստ ցայտէ արտաքս տոչորել
Զերկիր համայն զաշխարհ քանդել անարդել :
Ճակատադիր դառնահամբոյր ձախողակ ,
Զիմ աներկբայ ճիգըն թափէ կորզել թագ .
Իցէ արդեօք պաշտպան թագիս ոք ուրեք .
Պատել զինն , օ՛ն , զօրականք իմ , հասէք :
Բըռնի ի դից պահանջեցից . . . (Լսելի չիմի) :

Հրեշտակն

Լիւր , անըզգամ դու , ըզպատգամ սրբութեանցն .
Անդեղջ Է՛ անզուսպ ոճրագործ չէ ապրանաց .
Արիւն արդար հեղաւ յերկիր անխընայ ,
Ետես յերկինս Աստուած զընթացսդ անուղղայ :

Տրդատ

Տեսիլ նորահրաշ յուսաբեկ առնէ ,
Սարսափեալ դողամ յահաւոր ձայնէ .
Իրաւունք են իշխեցողին ըստ կամի
Հեղձամըղձուկ զարե բառնալ յամառի :

Հրեշտակն

Այդ շրջեղութիւն թադիդ հայրենի
Վերնոյն է պարզե շընորհեալ քեզ ձրի ,
Յուշ երբեք չածեր յորդառատ բարիս
Որով ճոխացոյց ըզքեզ նա յաստիս :
Ջարհուրեալ դողա՛ , շուարեալդ ի փառաց ,
Կարծեցեր թէ չիք այդըր կատարած .
Կըշռեցար կըշռօք , եհաս քեզ վախճան ,
Լարեցաւ աղեղն ի քեզ բարկութեան :

Տրդատ

Ջանք իմ և փոյթ զայս ըստացաւ պատիւ ,
Չըգիտեմ շընորհ ինչ ես ըստուգիւ .
Յարեան թաթաւեալ անձն իմ կորիցէ
Թէ յոխերիմս ոչ մըխեցից զաշտէ :
Աչաց յանդիման տեսի ըզվըտանգ ,
Դիմագրաւ եղէց տանել զյաղթանակ ,
Տապալեմ զաշխարհ ի մի ակընթարթ .
Ծանիր , որոտող , ծանիր զիս հանդարտ :

Հրեշտակն

Ի մի ակնարկ Տէր զօրութեանց խանգարէ
Ըզծով ծաւալ և ըզցամաք ի կայէ .
Ահա ածեմ ի քո վերայ պատուհաս ,
Ողջ ի մարմին բորբոս զազիր ախտանաս :

Տաճարո

Ահարկու գէպք և դառնաղէտ վարանէ զիս ,
Դողայ անձն իմ և պակասի հագագ ձայնիս
Ընդ նոյն շաւիղ հեծեծանաց անկցուք և մեք ,
Հիքացելոց չեն կարեկից և գիք երբեք :

Արտաշազդ

Աղէտք հասին , հողք պատեցին զիս խմբովին ,
Ի հուր մաշեն ի հրաբորբոք զանձն իմ ուժգին .
Ո՛վ դառն օրհաս , զի կաս յինէն դու մեկուսի ,
Ի մի հարուած բուռն թափով ան զիմ հոգի :

Օտայ (մեկուշի) :

Հարկ անհրաժեշտ զայր ըստիպէ իմաստուն
Միշտ գիտել քաջ ըզչափ անձին և գործոյն ,
Ապա թէ դք զառածանի յանպատեհս
Սըրտմըտութեան Տեառն հանդիպեալ առ ետեղ :
Խընդայր Տըրդատ գոռոզութեամբն սաստիկ ,
Չէր նա գիտակ թէ յայն ծածկին բիւր չարիք .
Ներկեաց ըզձեռն ի ճապաղիս անմեղաց ,
Պատրաստ այժմիկ լիցի պատժոյն փոխադարձ :

Տրդատ

Պայթեալ ուժգին լերինք Մասեաց թող յիմ վերայ փլանիցին ,
Կամ հող ճեղքեալ ընդ իմ ոտիւք ընկալցի զիս ի ծոցին ,
Յիս չիք երկիւղ երեւելի 'ւ աներևոյթ զօրութեանց ,
Երբեք ոգիս ոչ չիջանի վըհասութեամբ մահազգեաց :

Արտաշազդ

Լըւեալ ազինք՝ ըսքանչասցին ընդ թագաւոր մեր հըզօր
Որոյ ի բռին է շունչ կենաց և մահ անխոտոր :

Տաճարո

Արիք կոխան եղեն ոտից , զԱսուր յերկրէ նա երարձ ,
Պատառեցան թուփքն գետոց , տեղի ետ ջուր յորդընթաց :

Տրդատ

Նետիս եղև համայն երկիր դերի հարկօք լըծընբարձ ,
ի մի նըկատ՝ աչք իմ հրացայտ զանտառ յաճին փոխարկեաց .
եթէ Ողիմպ քինու ի կռիւ հանդիսասցի բըռնահար ,
Ծանիցէ քաջ զի Տըրդատս այս անյաղթելի ունի կար :

Հրեշտակն

Ըստամբակ անխըրատ յանդըգնիս տակաւին .
Ըղպըսակ ի գըլխոյդ բառնայ Տէր անքընին .
Օթեան բնակելոյ մի կալցես ընդ մարդկան ,
Քոյդ թողեալ զանամնոց ըզգեցիր կերպարան :

Տրդատ (մոլեգիւն առկանի) :

Ա՛յ որոտումն անիծաբեր ,
Զարին յերակ իմ ոչ թողեր
Եւ շընչահատ մատնիմ յերեր .
Օ՛չ թէ . . . (Ոգոռցանեն արագ գիտղենի) :

Օտայ

Արքայ , կանգնեաց և զօրացիր ,
Մերժեալ յանձնէ զաղմուկ պատիր . . .
Զինչ տեսանեմ , ո՛հ , Տէր Աստուած ,
Նըմանեցաւ պիղծ զազանաց :

Տրդատ

Հեռի յինէն դէմք մարդկային ,
Պատառեսցի սիրտ և մարմին ,
Ընդ անամնոց ես անբանից
Բընակեցայց բազմաթախիծ .
Վնասաբերին համբաւ բարի ,
Կորիցէ մի իսկ յիշեսցի :

Տաճատ

Զինն պատէ մութ և խաւար ,
Վէրք մահաբեր և ժանտ պալար .
Անկայց ուրեմն ընդ Տրդատայ
Ի խոշտանդանս ես անխընայ :

Արտաշատ

Կապեաց բլունի զիս խումբ դիւաց
Մաշել ըզկեանս դիւցազնապանծ ,
Հուր սատակիչ յանձն իմ եհեղ
Ըզխայթ խըղճի մըշտազօրեղ :
(Տաճատ և Արտաշատ տանին զՏրդատ) :

Օտայ

Թինչ յուսացի այր հողեղէն՝ թէ չէ հաշտ ընդ Աստուծոյ՝
Ձէ բաւական զանձըն զըսպել յօժարութեանց ի ներքոյ ,
Զօրհանապաղ անմըխիթար հեծեծեսցէ ի հողի ,
Մինչև դարձցի նա ըստ վըճուոյ ի հանգըստեան հող երկրի :
Տէր ի մարդոյ խընդրէ պատիւ զի ստեղծ ըզնա յիւր պատկեր ,
Այլ նա յօժար արարածոյ քան Արարչին տայ նըւէր .
Աստեղք ի վեր և տունկք ի վայր զԱնեղին փառս վերածեն ,
Այլ ազգ մարդկան ի խնամս չարին հանդիսանան անօրէն :

ՏԵՍԱՐԱՆ Ը .

ՍՄԲԱՏ , ՕՏԱՅ , ՇԱՒԱՐՇ

Մմբատ

Երայիւէպ մահու ի գետս արտասուաց
Նըման ախտակցաց հիւծիմ անձկայրեաց ,
Յիս գոյժ սեւթոյր զաղիս տոյրեաց ,
Կարճի տըրտմութեամբ արև իմ կենաց :
Բարձաւ ի միջոյ գահ Արշակունի ,
Այլսար և լալին ընդ աշխարհ սրբութի .
Կօրեաւ յիշատակ թագին արքունի
Հանգոյն բըռնաշունչ հողմոյ փոթորկի :
Ոչ այլ հընչեսցի նըւագ ցընձութեան ,
Կոծ մըշտագիչեր առցէ զՀայաստան ,
Քարող չըրջեսցի գաւառաց գութկան
Թէ Հայոց արև եհաս յիւր վախճան :
Տեղացին ի մեզ ի բարձանց չանթիք
Խապառ կործանել , վանդել զերդ մըրրիկ .
Վասն հըպարտութեան եղաք խաղալիկ
Գերի սատակչին կանայք և որդիք :

Տեսցեն աչք արդեօք ըզփառս վերըստին
 Թէ անըսպառ սիրտք մեր մերմբեսցին ,
 Դիտեալ յանդիման զարքայ մուկին
 Մըռնչեալ ահեղ խաժատէ զմարմին :
 Որպէս յիւր գահէ անկաւ կորակոր
 Եւ մեք ի մարտի անկցուք վիրաւոր ,
 Օտարին լիցի բաժին յաղթ ակթոռ
 Եւ սուգ ըզգեցցի բընութիւն բոլոր :
 Եկայք , բարեկամք , լինել մըխիթար ,
 Դասք լալականաց առէք ըղբընար ,
 Յերգ աշխարանաց աղետիցս յարմար
 Ի գութ հրաւիրել զանմահ բարերար :

Օտաւ

Որ բարձի հասեալ հրաման տայ ազգաց ,
 Զօրէնս ընդգրկել պարտի երկիւղած ,
 Ճուպ և դատաստան յիրաւունս կըշռեալ
 Լինել յարաժամ հաղթից դիմակալ :
 Զինչ հանդիստ գըտցէ հետտողն , զինչ օգուտ՝
 Երբ նորին խորհուրդք սըրտի իցեն սուտ ,
 Ի գուր սընոտեաց կործանի հեշտեալ .
 Աւասիկ բաժին գործոց անիրաւ :
 Եւ որոց համակ սիրտ իցեն մաքուր ,
 Փոխան ընդունին բարիս ի տրիտուր .
 Իսկ ամբարըշտին բաժին է գեհեան
 Ուր զիւրն ողբասցէ վիճակ յոռութեան :
 Արքայն մեր Տըրդատ թէ և զօրաւոր
 Այլ չունէր ի սըրտի գորով կարևոր .
 Արդարութեան ոչ եղև ի խընդիր ,
 Կատաղաբար զիւրն ի գործ եդ վըճիռ :
 Տանչեաց ըզԳրիգոր ծառայ իւր հըլու
 Եւ արկ ի վիրապ խոր Արտաշատու .
 Զինչ յանցեալ էր նա ընդդէմ իրաւանց ,
 Բայց զի ըզԳրիստոս Աստուած քարոզեաց ,
 Ըզկոյս Սիբիլայս կոտորեաց համայն
 Զի ոչ յանձն առին ըզգործ պըղծութեան .
 Յանցեալ մեյրեալ արքայն ի գահի
 Երկնեաց ի մըտի ըզխորհուրդ յոռի :
 Կորեալ ինքն , ընդ իւր կորոյս զՀայութիւն .
 Կարծէր թէ չիցէ դատելոց ուրոյն .
 Որ անդորրութեան երթիցէ ըզհետ ,

Հաճոյ Տեառն եղեալ օգտեոցի յաւէտ ,
Այլ զի՞նչ շահ կալ աստ . ելից ի Պալատ
Հընարս զըտանել դիպացս յուսահատ ,
Թերեւս ողորմածն զըթալ զըթասցի
Նորոգել ըզգահ փառաց հայրենի : (Երբայ) :

Սմբատ

Երթ դու պահ ունել անդ խաղաղութեան ,
Իսկ ես արտաքոյ դեգերիմ յոստան ,
Մինչև չափ լըցեալ մեղաց արքայի
Յաթոռ վեհաբար միւսանդամ դարձցի :

Շաշարչ (գայ) :

Ընդ պատիժն երկնառաք տըրտմութեամբ ըզգածար ,
Սուգ առին դըրացիք լան ըզմեզ բովանդակ :

Սմբատ

Լինէր մեզ դք գուշակ հանդերձեալ շինութեան ,
Ժուժէաք արդեօք . այլ սիրտ պիտի վիմարդեան .
Անըսփոփ է արկածս հանդիպեալ մեզ աստէն ,
Ողբք , լալիք դիւր սըրտից , ողբասցուք համօրէն :

Շաշարչ (երգէ) :

Ո՛ւր Տըրդատ մեր արքայն
Կորովով քաջութեան ,
Կայ ի մէնջ գաղթական
Ի պուրակս ապաստան :

Սմբատ (երգէ) :

Նըչաւակ բարկութեան
Ի գահ իւր աննըման
Շըրջեցաւ անդարման ,
Ի խոզի կերպարան :

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՕՏԱՅ, ՍՄԻԱՏ, ՇԱՒԱՐՇ

Օտայ (գալով) :

Զարմանալիս լրայ Սըմբատ ի Պալատան
Զոր և խոկալն անգամ էր ինձ յիմարական ,
Որում գուցէ ոչ հաճեսցին քո լսելիք ,
Այլ հաւատտեօք զիմ սիրտ ելից բանից կընիք :

Սմբատ

Հաղորդս արա և մասնակից քոց զարմանաց ,
Իբր անլըսող հետաքընին բանից գըտայց .
Գալուստ քոյին բարի լիցի մեզ աստանօր ,
Վըշտացելոց մերկեալ ըզլուր աւետաւոր :

Օտայ

Մինչ այն ինչ բաղխեալ ըզդուռն արքունեաց ,
Թաւեւան կըսկիծք ի սիրտ իմ հրայրեաց .
Ի սէր հայրենի օգտի և բարւոյն
Զայդ թըմբիր յինէն մերժեցի ուրոյն :
Վազեաց ընդ առաջ իբրև ըզփայլակ
Քոյր թագաւորին , դէմք իւր փայլունակ .
Խօսէր , այլ բանն ի բերան կայր ընդհատ ,
Մերթ ածէր ի մէջ զեղբայր իւր Տըրդատ :
Ընդ այն այլայեալ , մեղմաբար հարցի .
Զի՞ քեզ խընդալ ընդ վիճակ արքայի ,
Մերկ շըրջի մարմնով նա աստանդական
Եւ դու տակաւին գոս ի խընդութեան :
Ո՛չ ո՛չ , ինձ ձայնեաց բանիւ զանազան
Խոսրովիդուխտ իբր ըզչուշան զալկան ,
Ընդ կորուստ իմոյս եղբօր ոչ խընդամ
Այլ ի տեսլեան ինձ Ոգին ետ պատգամ :
« Բաւ այդքան , ասէ . յանցանք քաւեսցին ,
Անճառ լիութիւնք ձեզ տեղան բանին .
Մի այլ կըրկնեսցի դիւական պաշտօն ,

Տըրդատ զըղջացեալ գարձցի յիւր կեդրոն » ,
 Ընդ այն կասկածեալ իմ, հարցի ըզգաստ .
 Զիւրդ յերկնից Տէր արասցէ մեզ ազդ :
 Պատուիրեաց հանել զԳրիգոր ի գըբոյ
 Զի բըժըշկեւ զախտս իցէ նա պիտոյ :
 Ժըպտեալ զառաջինն ի բաց մերժեցի .
 Երազք են , ասեմ , ցընորք գիշերի .
 Երկիցս երևեալ , կըրկին խոտացայ ,
 Յերրորդում՝ պատիժք եղան ինձ վըկայ :
 Զայս երևումն ինձ պատմեաց ճըշմարտիւ ,
 Հայցեալ՝ յԱրտաշատ փութալ առ վաղիւ ,
 Անդ ի վիրապէ հանեալ ըզԳրիգոր
 Յաճեալսիս ածել ի զարդ պըճղնաւոր :
 Սմբատ

Անսալ բանիդ ինձ ապաքէն թըւէր անմարթ
 Թ' օտարական որ յերևան հանէր ինձ զայդ .
 Այլ իւ եկեաց ի գըբի զամս հընգիցս երրեակ ,
 Բայց զի յերկնից եղև նըմին Տէր օժանդակ :

Շառարշ

Բարէ . չէ հընար ծածկիլ սըտութեան .
 Թիմարութիւն է այդըմ գոլ հաւան .
 Միթէ զուրացող կեցուցանեն դիք
 Որ արկեալ ի գուք ոչ գարձցի ի չիք :
 Ապա թէ ունի ըզկար գերազանց
 Քան ըզյաղթ բազուկ դից մեր հայրենեաց ,
 Զիւրդ խաչեալ որ իցէ բաւական
 Փըրկեւ զինքն , այլում լինել օգնական :

Օտայ

Ես ինքն հաւատամ ի բոլոր սըրտէ ,
 Ընդ վայր զիս աշխարհ ծանակ արասցէ .
 Անդ խաւարասէր աչք բացցին կուրաց ,
 Ընդ իս զօրական գայցէ համընթաց :

Սմբատ

Ե՛րթ , հայրենասէրդ Օտա , ի բարի ,
 Ըզլուրն հաւաստեալ արա՛ մեզ յայտնի :

Շաշարչ

Ընդ քեզ երթալ ոչ հեղգանամ,
Յուցից մատամբ զայդ անըզգամ.
Կըմախ դաժան՝ դի մեռելոց,
Ոսկերք մաշեալք ի յոյր զեռնոց : (Երթան) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ.

ՍՄԲԱՏ, ՇԱԽԱՐՇ

Սմբատ

Որ ըստեղծեր, Տէր հրաշագործ, բանիւ միով
ՁԱԳԱՄ, զԷԼԱ, զարեգ, ըզհող, այլ և ըզծով,
Ի՛նչ ապրեսցի այն ապիկար քո արարած,
Թէ ոչ ի քէն շող ընկալցի երկնատեղաց :
Զլացար արդեամբ և արժանեալ ըզնոյն պարզ և
Ձի ապըստամբ ի քէն եղեաք պաշտել ըզդ և,
Այլ այժմ. հայեաց գըլծած աչօք յազդ մեր այրի,
Ի չար շաւղէն առաջնորդեալ դու ի բարի :
Լեր դու գըլծով տառապելոցս ազատարար,
Ձի ծանիցուք ըզհաղբ չարին վընասակար .
Առ երկիւղի ես դրօշելոց պագի երկիր,
Այլ զայն ի մեղս, ողորմած Տէր, մի համարիր :
Թէ և անուանք դից ի շըրթունս իմ յիշեցան,
Բայց և բարւոյդ յոյս ի սիրտ իմ կայր անսասան .
Քեզ արծարծել յիս կաթոգին ըզսէր տենչամ
Ձի բարձր ըզքեզ առնել ուսայց ես միւսանգամ :

Շաշարչ (գայ) :

Արկածք հրաշալեաց զեղան բազմացան,
Ընդ որ զարմանալ մեզ իցէ արժան .
Ընդ յայտնութիւն քեռ մերոյ արքայի,
Թէ ընդ Գրիգորի կալըն կենդանի :
Արկ պարան ի գուր Օտայ նախարար,
Ել Գրիգոր ի վեր ուրախ և կայտառ,
Դէմքն են լուսասփիւռ, աչք սիրաբոյրեղք,
Ի սըրտէն հեռի հեծութեան մորմեք :

Բերան օրհներգու գովէ զարարիչ,
Որում ոչ մեղաւ ոչ իժ ոչ կարիճ,
Ձեռք նորա բըժիշկ ցաւոց վըշտազգեաց
Զոր ոչ իսկ տեսին աչք բանաւորաց,
Եւ ուր գից . . . (Հասանէ Գրիգոր ընդ Օտայի) :

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Ժ Ա .

ՍՄԲԱՏ, ԳՐԻԳՈՐ, ՇԱԽԱՐՀ, ՏԱՃԱՏ, ԱՐՏԱԽԱԶԴ, ԲԱՆԱԿՆ

Սմբատ

Երկինք, զինչ . . . (Ափշեալ ողջագուրէ գԳրիգոր) :

Գրիգոր

Նա ի գըբոյ եհան զանձն իմ :

Սմբատ

Բերկրապատար ըսքանչեւօք լըցան սիրտք մեր
Ձի տեսին աչք զողորմութեան Տեառն ըզմըթեր .
Ընդ մեզ իւրով ակամբ հաշտեալ անյիշալար ,
Ի վըրկութիւն մեր ըզԳրիգոր տայ գերափառ .
Որ կանխալուր քարողութեամբ մարգարէից
Ծանօթացոյց ըզՄեսիային դալուստ անբիծ ,
Ճըլմարիտ Տէր մահկանացուաց կեանք հաւաստեաւ ,
Զոր ըստուգէ նահատակիս կենաց համբաւ :

Գրիգոր

Նովին անչափ շնորհաց բարեօք այսուհետեւ
Մաղթեմ և ձեզ զի լիաջիւր մըշտապարգև ,
Քրիստոսի քաջ հովուին լինել հօտ սեպհական ,
Հեզահամբոյր պատկառ նորին կալ պաշտաման :
Որք մոլորեալք ըզհետ շաւղաց սըտապատիր՝
Թողեալ զուղղորդն զոր աւանդեաց Նոյ հոգեկիր ,
Տեսէք ո՛րքան վընասակար է սպաս կըռոց ,
Լըլկեալ պէսպէս դուք խօթութեամբ խաւարակոծ :
Ի բաց կացէք ի զարտուղի թիւր պատգամաց
Զորքս ճըգնին հաստատ ունել քուրմք ըստ կարծեաց .
Արկէք ըսպաս բուն արարչին յօժարակամ
Ձի յեա մահուան հասջիւր կոխել յԱզենին սեամ :

Շաշարչ

Մինչև ցերթ ի մոլարն ես կացից ի դատման ,
Մերկացայց զայդ ի բաց արարչին յանդիման .
Ի Տեառնէ ըզնեբրումն հայցեալ դու իմ փոխան ,
Անթիւ են իմ յանցանք և ոճիրք չարութեան :
Ի՛ւ պատրեալ հաճեցաք ընդ հաճոյս պըղծութեան
Որով ցարդ յառասպելս կործանիմք յընդունայն .
Կարծէաք զարարածն արարիչ եղելոց ,
Եւ սակայն են ոչինչ ինքեանք և նոցին գործ :
(Գաւն Տաճարտ և Արտաշատգդ և Բաւնակն) :

Արտաշատգդ (ի ծռնկս) :

Ի վըրէժ յանցանաց այսք զազիրք նեղեն զիս ,
Եղևիկ ինձ , զի կամօք նիւթեցի քեզ չարիս .
Զարտասուս հեծութեան ահա աչք իմ հեղուն ,
Մաղթանօք քո հասցէ ինձ դարման Բարձրելոյն :

Տաճարտ (ի ծռնկս) :

Ձեն ի ծածուկ և իմ վընասք յանդըզնութեան
Թաղաւորին ըզքեղ մատնեալ ես դաւաճան .
Առատապէս զինչ շահեցայ սորին փոխան
Բայց զի խըղճի խայթ և տազնապ տարապայման :
Հայցեմ , Գրիգոր , լինել բուժիչ մարմնոյս վիրաց
Որով մըտացս հոգք վերասցին արտահալած ,
Որ ի զուր երբ որոնէաք ըզյահ անձանց ,
Հաս իրաւամբ յանձինրս մեր էին հարուած :

Գրիգոր

Եթէ անկեղծ է ապաշաւ ձեր և իրաւ ,
Ամենագէտն ներէ մեղացդ արդ հաւաստեաւ .
Ոչ միայն ցաւք փարատեացին յանձնէդ ի բաց
Այլ և շընորհք իջցեն յերկնից երանապանծ :

Բաւնակն

Ի քեզ միաբան լինիմք ապաստան ,
Մեր տըկարութեան լեր պատըսպարան ,
Քե ընդ արարչին հաշտեսցուք սիրով ,
Քե ի մեզ հեղցէ զիւր հաշտից գորով :

Գրիգոր

Ուրախ է անձն իմ, Տէր կենդանի ,
Զի փառք քո յայտնեցաւ յաշխարհի :
Հայկազունք , դիմեալիք առ Աստուած ,
Բարձրասցին աղօթք ձեր և խընդրուած :
Ըսպասէ ձեզ գաւիթ ոչխարաց
Զոր հըզօր փայտ խաչին պատրաստեաց .
Մըտէք արդ զի հաշտ է Տէր ընդ ձեզ ,
Այն որ է խոնարհ և հովիւ հեզ :
Սակայն , ուր արքայն հէք , ուր իցէ ,
Խանդակաթ ըզնա անձն իմ խընդրէ .
Հանդիպեալ փարեցայց անմեկին ,
Վերասցի ի մարմնոյն ախտ նորին : (Շոշրջ աճէ զաչս) :
Աստ ահա դիմեալ զայ : Ե՛կ , առ իս . (Փոխէ քայլս ինչ) :
Հիմ աստ 'ւ անդ վարանեալ տատանիս .
Զօրացիր հաւատովք ֆրիստոսի ,
Նա ըզքեզ հարուածեաց առ վայր մի .
Այլ այժմիկ ... (Տրդատ եկեալ անկանի յոռս նորա) :

ՏԵՍԱՐ ԱՆ ԺԲ.

ՏՐԴԱՏ, ԳՐԻԳՈՐ, ՕՏԱՅ, ԲԱՆԱԿՆ

Տրդատ

Ո՛վ ամօթոյս :

Գրիգոր

Կա՛լ յանձին ըզյոյս :

Տրդատ

Բազկատարած խընդրեմ ի քէն գութ և սէր ,
Գութ յարարչէն , ներումն ի քէն յանցանացս :
Ո՛հ , մարմին իմ հիւժեալ մաշի կարեւէր ,
Հոգիս ծըփայ բիւր վարանման ի հարուած :

Գրիգոր

Խաչեալն Յիսուս ֆրիստոս է Տէր մարդասէր ,
Բաց ի նմանէ չունի դեզ որ վասըն մեր .

Մոխիր ցանեալ և ըզգեցեալ դու ըզխորդ
Ապաշուեա՛ , և փարատին ի քէն ցնորք :

Տրդատ

Խոստովանիմ և դաւանիմ աներկբայ

Ձի է Աստուած Գրիստոս Յիսուս գերակայ ,
Երդնում մերժել ջընջել ըզդիս խաբեբայ ,
Հաստատապէս ցանկամ լինել քրիստոնեայ :

Գրիգոր

Դու սրբտագէտ ամենայնի , միտք անսահման ,
Իջեր յերկնից կորուսելոց լինել ժաման .
Ահա ի դուճս արտասուազոյ քո յանդիման
Յողորմ տեսիլ պատուհասեալք՝ զըթոյ ցանկան :
Ջարեան քո չիթ մի զըլանար հէք իմ աղին ,
Մի պարծեսցի ի չարութեան դև աղտեղին .
Ի Հայաստան տաճարք յանուն քո կանգնեսցին
Եւ բաշխեսցի անդ արիւն քո և մարմին :
Բա՛ւ այդքան ողբ դառնահամբոյր . արի՛ կանգնեաց
Ձի ես հանգոյն որդւոց մարդկան եմ արարած .
Թող զամբարիշտ հըպարտութիւն , ծանիր զԱստուած ,
Որում վայել է յարգ ձօնել մեծարանաց :

Բանակն

Մատուցուք զոհութիւն բարութեան Բարձրելոյն
Որ կորզեաց զազգ մարդկան ի ժանեաց բելիարայ .
Դու կարգեալ փրկութեանս առաջնորդ բարեմոյն
Ուսուցես ըզպատգամս և զօրէնս Եզեմայ :

Գրիգոր

Միտ դիցէ այր անձնիւր կալ յաղօթս առանձին ,
Աշխարել և ողբալ ի հանդերձ սըգային ,
Մինչև Տէր զոմրն ձեզ ընտրեսցէ առաջնորդ
Ողջացեալ և շնորհի սըրբութեան գոլ հաղորդ :

Տրդատ

Պաղատիմ Տեառն զըթութեան ես լալազին
Ըգբեզ հովիւ և հայր կարդել մերոյ հօռին .

Ի փռչալից այգւոջ մերում անխոնջ մըշակ
Քեզ յարածամ հոգւով մարմնով կամք հըպատակ :

Գրիգոր

Անակայ եմ ծնունդ յառնէ մեղապարտ ,
Ի՞բր հասուցից ըզդարձդ յամբոկ և յաւարտ .
Մեծ է պաշտօնն , առն բարւոյ է պատշաճ՝
Զայդիդ գործել յըզբերս առնել բարգաւաճ :

Օտաւ

Ազդեաց մեզ հրեշտակ՝ լինել քեզ հովիւ ,
Քև պաշտել զԱստուած անդադար ձայնիւ ,
Ունկընդիր եղեալ ի լուր քո խրատու
Դարձիս , պաղատիմ , լիջիր ձեռնատու :

Բանակն

Առ քեզ ազդովիմք դիմեմք ողորով ,
Մի ևս զըլանար դու մեզ ըզգորով .
Հաճեցաւ Անմահն ընդ մեզ խանդակաթ ,
Զի ըզքեզ ընտրեաց ախտից դու փարատ :

Գրիգոր

Ոչ զայդ պատիւ ընդգըրկէի գերաստիճան
Եթէ անդարձ ձայն կոչողին չըտայր հրաման .
Ոչ դանդաղիմ ի շահ օգտի հասարակաց
Համբերատար զբեռն բառնալ դըժուարընթաց ,
Թանդուլ աղօթքս տըքնեցիք դուք առեալ զկայ
Մինչև տեսից ըզՂևոնդիոս ի Կեսարիա ,
Խորհել անդ՝ ընդ Եկեղեցւոյն զուղի պատշաճ՝
Զօգուտ աղդին , ըզփառս Էին մըշտաճաճանչ :

Բանակն

Երթիջիր բարեաւ ի փող ցընծութեան ,
Ընդ քեզ եկեսցէ խուռն զօրական ,
Եւ դարձցիս ողջամբ հովուել զՀայաստան : (Զու) :

Զգի վարագոյր տեսարանին :

Կը շարունակուի :